

ՄԱՐԴԿԱՆՅ ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

Ա. Լ. Դադայան

Մարդու օրգանիզմն ակտիվորեն սնկային հիվանդությունները բազմաթիվ են: Դրանք դասվում են մաշկային վարակիչ հիվանդությունների շարքին: Ախտահարվում են մաշկը, մազերը, մուղնզները, բերանի, շնչառական համակարգի, միզամեղանի օրգանների յոթնաթղանքները, հազվադեպ նաև այլ ներքին օրգաններ:

Մաշկի, մազերի և մուղնզների մեջ սնկերը իրենց համար գտնում են անհրաժեշտ մեղրանյութեր, ճարպեր, սպիտակուցներ, որոնք սնկերի կողմից արտադրվող օրգանական ազդեցության տակ փոխակերպվում են ավելի պարզ, նրանց համար հեշտ յուրացվող միացությունների:

Հաշվի առնելով, որ ակտիվորեն սնկերը՝ դերմատոֆիտները լայնորեն տարածված են բնության մեջ և դրանցից շատերը մարդկանց հիվանդությունների պատճառ են հանդիսանում, ապա մենք կարողանալով ենք ուսումնասիրել դրանց տարածվածությունը ԼՂՀ-ի պայմաններում:

Դրա համար օգտագործել ենք հանրապետական մաշկավեճերոցիակա հիվանդանոցի գլխավոր մատյանների տվյալները, հիվանդների քարտերը, մանրադիտակային, բակտերիոցիակա ուսումնասիրությունների և այլ հետազոտությունների տվյալները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ԼՂՀ-ի տարածքում մարդկանց շրջանում սնկային հիվանդություններից մեծ տարածվածություն ունեն ոտնաթաթերի միկոզները դերմատոֆիտիան, օտնաթաթերի որրինը, էրիթրազմը, ռուբրոմիկոզները և տրիխոֆիան: Ուսումնասիրությունները կատարել ենք 1988-1998թթ. ժամանակահատվածում: Պարզվել է, որ ԼՂՀ-ում Լախոդերմատոֆիտիան տարածված սնկային հիվանդություն է, որը առավելագույն տեղակայվում է ձմռանը, ափերում, ոտնաթաթերի միջմատային և աճուկային ծալքերում: Լախոդերմատոֆիտիան բնորոշվում է խորակի կրկնվող ընթացքով և օրգանիզմի ընդհանուր թմկտիվության խանգարումներով, որը կլինիկապես որոշ դեպքերում արտահայտվում է ալերգիկ ծանկալայով: Հիվանդության հարուցիչը Լախոդերմատոֆիտոն տեսակի սնկերի գանգառն ձևերն են ներդանների շրջանում եղջրաշերտի մեջ խրվելու հետևանքով, Լախոդերմատոֆիտայով հիվանդանալու հետք ստեղծվում են բարենպաստ պայմաններ: Լարակն առողջների և անցնում հիվանդների գուլպաների, կոշիկների օգտագործման միջոցով, ինչպես նաև բաղնիքներում:

Լախոդերմատոֆիտիայի պաթոգենեզում մեծ նշանակություն ունի օրգանիզմի թմկտիվությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սնկերով վարակվածների մոտ մեծ մասամբ տարիներ շարունակ հիվանդությունն ընթանում է աննկատ, թույլ ախտահիշներով՝ ներքապային կամարների թեթև թեփոսում, ոտնաթաթերի III-IV, IV-V միջմատային ծալքերի թեթև թեփոսում, հաճախ թեփոսման օջախներում նկատվում են բշտեր, որոնց զրգոսնան շնորհիվ կարող են սկսվել բորբոքային կարբոնային և բոր: Հիվանդությունն ընթանում է նաև մակերեսային բշտերի առաջացումով, որոնք պարունակում են շճային հեղուկ: Հիվանդները գանգառվում են ուժեղ քորից, քայլելիս՝ ցավից: Բշտերը պատվում են, առաջացնում ցավոտ էրոզիաներ, ոտնաթաթերը պայտալվում են, բշտերը թարախակալվում, բարձրանում է ջերմությունը, առաջանում է լիմֆանոզիո և լիմֆոադենիտ: Հնարավոր է ալերգիկ գանգառում մարմնի վերին վերջույթների մաշկի վրա:

Օդաբորբոքային ձևի դեպքում բշտերը բացակայում են, սակայն միջմատային ծալքերի մաշկը ուժեղ քորոնում է, ենթարկվում է մաքրակալի, առաջանում են կարմիր, բարակ մակերեսով էրոզիաներ: Հիվանդը գանգառվում է քորից, այտուցից, ախտահարվում են նաև ոտնաթաթերը, եղունգները:

Տարածված սնկային հիվանդություններից է նաև Ռուբրոմիկոզը, որի հարուցիչը տրիխոֆիտոն ռուբրում է: Ախտահարվում են ոտնաթաթերի մաշկը, եղունգները, ձմռանի ալերգի մաշկը, աճուկային ծալքերը, իրանի մաշկը, երբեմն՝ աղվամազերը: Մաշկի ակտիվորեն օջախներում աճված են չորություն, այրանման թեփոսում, քոր, հազվադեպ բշտիկավորում: Եղունգային թիթեղը աստիճանաբար կորցնում է փայլը, ողորկությունը, նրա հաստության մեջ

գոյանում են դեղին բծեր, գոլեր, հետագայում ամբողջ եղունգն ընդգրկվում է պրոցենի Ռուսումնասիրությունները ցույց են տվել, որ հիվանդության ավելի շատ դեպքեր գրանցվել են պատերազմական տարիներին՝ 1993-1994թթ. և արժանագրվել է ուռնաթաթերի էպիդեմիոգիայի 40 դեպք, իսկ 1995թ. նկատվել է հիվանդության աճ, արժանագրվել է 45 դեպք: Այս ցուցանիշները վկայում են պատերազմական տարիներին բնակչության սոցիալ-տնտեսական և սանիտար-հիգիենիկական անբավարար պայմանների մասին: Հետագա տարիներին նկատվել է հիվանդության վարակվածության աճում:

Ռսումնասիրել ենք նաև հիվանդությամբ վարակվածության դինամիկան՝ ըստ տարիների: Ըստ 1994թ. տվյալների՝ այդ վարակվածության մարսիմալ աճ նկատվել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Իսկ 1995թ. տվյալների համաձայն՝ հիվանդության ավելի շատ դեպքեր գրանցվել են ամռան, աշնան և ծմռան ամիսներին, հիմնականում՝ զինծառայողների մոտ: Ընդ որում պատահիները և միջին հասակի սղամաղդիկ ավելի հաճախ են հիվանդանում ուռնաթաթերի էպիդեմիոգիայով, քան տարեց մարդիկ, կանանց մոտ նկատվել է հիվանդության եղանակ դեպքեր: Այս հիվանդությունը դեռ բավականին տարածված է բնակչության և առանձնապես զինծառայողների շրջանում:

Հիվանդության զարգացմանը նպաստել են մի շարք արտաքին գործոններ՝ միջավայրի ցերեմատիզմանը, խոնավությունը, ուռնաթաթերի մաշկի վնասվածքները, կենցաղի և աշխատանքի պայմանները:

Մեր հանրապետությունում տարածված սնկային հիվանդություններից է նաև գունավոր սրբին:

Այս հիվանդության ավելի շատ դեպքեր նկատվել են պատերազմական տարիներին (1993-1994թթ.): Սկսած 1995թ. մինչև 1997թ. նկատվել է վարակվածության աճում, իսկ 1998թ. նորից հիվանդության աճ է նկատվել զինծառայողների շրջանում: Վարակը փոխանցվում է հիվանդներից ախտահարված մաշկի հետ անմիջապես շփման դեպքում կամ նրանց սպիտակեղենը օգտագործելուց: Հիվանդի պարանոցի վերին հատվածում, վերջույթների, որովայնի առաջնային մակերեսին և մաշկի այլ հատվածներում, մազերի ֆոնիկուլների շուրջը առաջանում են տարբեր չափերի ընդգծված դեղնադարչնագույն աննշան բնիոտումով բծեր: Արևի ճառագայթներից բծերը սպիտակում են, և առաջանում է կեղծ սպիտակամաշկություն: 1994թ. արժանագրվել է գունավոր սրբինի 15 դեպք՝ հիմնականում զինծառայողների շրջանում: Հետագա տարիներին հիվանդության վարակվածության աստիճանը բնակչության և զինծառայողների շրջանում նվազել է: Վարակի աղբյուրը տրիխոֆիտայով հիվանդ մարդն է և նրա օգտագործած կենցաղային իրերը: Հիվանդանում են ցանկացած տարիքում, սակայն ավելի հաճախ դպրոցական հասակում:

Ռսումնասիրությունների արդյունքներից եզրակացրել ենք, որ նշված հիվանդությունների զարգացմանը նպաստել են բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, միջավայրի բարձր ցերեմատիզմանը, խոնավությունը, պատերազմի տարիներին սանիտար-հիգիենիկ միջոցառումների բացակայությունը և օրգանիզմի իմունոկենսաբանական դերի թուլացումը:

Հիվանդությունները կանխելու համար անհրաժեշտ է ժամանակին հայտնաբերել դերմատոմիկոզներով հիվանդ մարդկանց և սկսել մարմնի վարակված օջախների բուժումը: միաժամանակ պետք է անձնական հիգիենայի կանոնները:

Ամփոփում

Ռսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ԼՂՀ-ում մարդկանց մեկային հիվանդություններից առավել տարածված է ուռնաթաթերի էպիդեմիոգիան:

Резюме

Исследованиями установлено, что среди населения НКР из грибковых заболеваний наиболее распространение имеет эпидермифития стопы ног.

Գրականություն

1. Арсевич А.Т. Патология ногтей, Тбилиси, 1976.
2. Кашкин П.Н. Руководство медицинской микологии, Москва, 1978.
3. Машкиллейсон А.И. Кожные и венерологические болезни, учебник, Москва, 1976.

ԱղՊՀ, կենսաբանության ամբիոն

Ժանգասնկեր, որոնց զարգացման ցիկլում առկա է միայն տելեյտոստադիան, նշվում են Micro- նախաձանգով, որը դրվում է Ժանգասնկի ցեղանվան սկզբից:

Որոշ միկրոձևերի մոտ տելեյտոսպորներն աճում են հատուկ անմիջապես հետո և մեկ վեգետացիոն շրջանում կարող են տալ մի քանի գեներացիա: Այդպիսի Ժանգասնկերը տարբերակվում են Lepro- նախաձանգով, որը դրվում է Micro- նախաձանգից առաջ [2]:

Լնդրի դրվածքը: Դարաբաղի բոլոր շրջաններում (բացառությամբ Շահումյանի շրջանի) տարածված Ժանգասնկերի հատուկ ուսումնասիրությունները սկսվել են 2005 թվականից: Նշված տարածքի համար առաջին անգամ հայտնաբերվել և որոշվել է Ժանգասնկերի տեսակային կազմը, տարածվածությունը, պարզաբանվել է ուսումնասիրված սնկերով այստահարված ըստատմասկները: Ներկայացված աշխատանքում ուսումնասիրվել և խմբավորվել է 1, ԴՆ-ում հայտնաբերված Ժանգասնկերն՝ ըստ զարգացման առանձնահատկությունների:

Հետազոտության արդյունքները և քննարկումը: Հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են Ժանգասնկերով վարակված 72 բուսատեսակներ՝ ընդգրկված 23 ընտանիքներում, և որոշվել այդ բույսերի վրա մակաբուծող 63 տեսակի Ժանգասնկեր, որոնք ընդգրկվում են 9 ցեղերում: Հայտնաբերված Ժանգասնկերն, ըստ զարգացման առանձնահատկությունների, խմբավորված և ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ժանգասնկերի խմբավորումն ըստ զարգացման փուլերի

Ժանգասնկերի զարգացման փուլերը	Eu O, I, II, III	Brachy O, II, III	Hemi II, III	Opsis O, I, III	Micro III
Ժանգասնկերի ցեղերը					
Puccinia	18	9	5		4
Uromyces	10			1	
Phragmidium	5				
Gymnosporangium		1		2	
Melampsora	2			1	
Tranzschelia	1				
Aecidium	1				
Coleosporium	2				
Pucciniastrum	1				
Ընդամենը	40	10	5	4	4

ԴՆ-ում հայտնաբերված Ժանգասնկերից 40-ը լրիվ ցիկլով զարգացող տեսակներ են, որոնցից 18-ը պատկանում են Puccinia, 10-ը՝ Uromyces, 5-ը՝ Phragmidium, նրկուական՝ Melampsora, Coleosporium և մեկական՝ Tranzschelia, Aecidium, Pucciniastrum ցեղերին: Ուսումնասիրված սնկերից լրիվ ցիկլով զարգանում են անանուխի (Mentha L.), ցորենի (Triticum L.), յոթու (Phascolus L.), սալորենու (Prunus L.), մեխակի (Dianthus L.) մասրենու (Rosa L.) և շատ այլ բույսերի վրա:

Սպիրմագոնիալ, ուրեդո- և տելեյտո- ստադիաներով զարգացող Ժանգասնկերից հայտնաբերվել են 10 տեսակ, որոնցից 9-ը Puccinia և 1-ը Gymnosporangium գեղի ներկայացուցիչներ են: Նշված սնկերն այստահարում են խնձորենին (Mallus Mill), տերեւիկը (Centaurea L.), կռատուկը (Arctium L.), խատուտիկը (Taraxacum L.) և այլ բույսեր: Ուրեդո- և տելեյտո- ստադիաներով զարգացող Ժանգասնկերից հայտնաբերվել է 5 տեսակ, որոնք բոլորն էլ պատկանում են Puccinia ցեղին: Դրանք օշինգրի (Artemisia L.), ոգնախոտի (Dactylis L.), կաղնակի (Onopordon L.), պիսակի (Conium L.), թրթնյուկի (Rumex L.) վրա մակաբուծող սնկերն են:

ԼՂՀ-ում հայտնաբերված ժանգասնկերը, որոնց զարգացումն ընթանում է էգիդիայի և տելեյտոստադիաներով՝ Gymnosporangium, Uromyces և Melampsora ցեղերի սնկեր են: Ղարաքաղաքի տարածքում են տաճենու (Pyrus L.), սերկվենու (Cydonia Mill.), ուռենու (Salix L.) և վիկի (Vicia L.) տեսակները:

Հայտնաբերվել են նաև Puccinia ցեղին պատկանող 4 տեսակի ժանգասնկեր, որոնք մակաբուծում են փիփերթի (Malva L.), տատասկափուշի (Carduus L.), լեռնալստի (Teucrium L.) դառնափուշի (Xanthium L.) վրա: Այդ ժանգասնկերի զարգացման ցիկլն իրականացվում է միայն տելեյտոստադիայով:

Եզրահանգում: Այսպիսով՝ պարզվել է, որ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության տարածքում հայտնաբերված 63 տեսակի ժանգասնկերից 40-ը Eu, 10-ը Brachy-, 5-ը Hemi-, 4-ը Opsi- և 4-ը Micro- ձևերով զարգացող սնկեր են:

Ամփոփում

ԼՂՀ տարածքում 2005-07թթ. կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են ժանգասնկերով վարակված 72 բուսատեսակ և որոշվել նրանց վնասմակարծող 63 տեսակի ժանգասնկեր, որոնք միավորվում են 9 ցեղերում: Այդ ժանգասնկերից 40-ը լրիվ զարգացման ցիկլով զարգացող ժանգասնկեր են, իսկ 23-ը զարգանում են ոչ լրիվ ցիկլով: Հայտնաբերված ժանգասնկերը դասակարգվել են ըստ զարգացման առանձնահատկությունների և պարզվել է, որ 63 տեսակի ժանգասնկերից 40-ը Eu, 10-ը Brachy-, 5-ը Hemi-, 4-ը Opsi- և 4-ը Micro- ձևերով զարգացող սնկեր են:

Резюме

Вследствие исследований, проведенных на территории НКР 2005-07 гг. было обнаружено 72 вида растений, зараженных ржавчинными грибами, было определено 63 вида ржавчинных грибов, паразитирующих на них. Из всех ржавчинных грибов, которые входят в 9 семей, 40 видов развиваются в полном цикле, 23 вида – в неполном цикле. Обнаруженные ржавчинные грибы классифицировались по особенностям развития и выяснилось, что 63 вида ржавчинных грибов отличаются следующими способами развития: 40 видов - Eu-, 10 - Brachy-, 5 - Hemi-, 4 - Opsi- и 4 - Micro-

Գրականություն

1. Купревич В.Ф., Ульянищев В.И. Определитель ржавчинных грибов СССР. Минск, часть I, 1975. 336с.
2. Бсуга К.А., Карпова-Бсуга Е.И. Паразитные грибы Якутии. Новосибирск, 1973. 336с.
3. Karsten P.A. Mycologia Fennica. IV // Bidr. Finn. Nat. Folk. Part 31. 1879. P.4-63.
4. Trail J.W.H. Revision of the Uredineae and of the Ustilagineae of Scotland // Scotl. Nat. Vol. 10., 1890. P. 302-327.
5. Schroeter J. Entwicklungsgeschichte einiger Rostpilze // Cohn's Biol. Pfl. Bd 3 1879. S. 51-93.
6. Schroeter J. Die Pilze Schlesiens. I. Kr.-Fl. Schles. Uredinel. Breslau, 1889, P.291-381.
7. Азбукина З.М. Ржавчинные грибы (Низшие растения, грибы и мохообразные). Владивосток: Дальнаука, 2005. 616с.
8. Тетервникова-Бабаян Д.Н. Микофлора Армянской ССР. т. 4, Ереван, 1997, 484 с.
9. Ульянищев В.И. Микофлора Азербайджана. т. 2, Баку, 1959. 444с.
10. Ульянищев В.И. Микофлора Азербайджана. т. 3, Баку, 1960, 255с.

Արմհ. կենսաբանության ամբիոն